ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-3

ք. Վանաձոր

«23» հունիսի 2017 թ.

ՀՀ Լոռու մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ն. Սարգսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՏՐԻՈՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ.Պողոսյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձոր համայնքի Իսահակյան 11 և Թումանյան 4 բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2017 թվականի սեպտեմբերի 30-ը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 5.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 5): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 12000000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ : Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝
3-րդ չափաբաժին 6500000 (վեց միլիոն հինգ հարյուր) ՀՀ դրամ:
4-րդ չափաբաժին 5500000 (հինգ միլիոն հինգ հարյուր) ՀՀ դրամ :
5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 5 և N 5.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Լոռու մարզպետարան	«ՏՐԻՈՇԻՆ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ	ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06930769	ՀՎՀՀ 06945645
ՀՀ 900231751026	Հ/Հ 2050222112831001
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ	«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձորի մ/ճ
Ն. Սարգսյան	Գ.Պողոսյան
Կ.Տ.	

Հավելված թիվ 1
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-3» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ-1

Վանաձոր համայնքի Իսահակյան 11 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման

N/N	Գնի հիմքը	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Արժեքը հազ. դրամ	
					Միավորի	Ամբողջը
1	2	3	4	5	6	7
1	23-159	Ալիքավոր ա/ց թերթերից կտուրի քանդում	մ^2	843.50	0.212	179.239
2	23-157	Պիպերի մետաղական թիթեղի քանդում	մ^2	27.70	0.103	2.864
3	23-157	Օդափոխության հորանների և <<Սլուխովի>> պատուհանների պարագծով թիթեղի քանդում	մ^2	101.00	0.103	10.443
4	10-71 գ-0.8	<<Սլուխովի>> պատուհանների ապամոնտաժում	հատ	4.00	6.619	26.478
5	8-300 գ-0.8	Տանիքի փայտե էլեմենտների ապամոնտաժում	մ^3	2.00	26.220	52.440
6	8-300 գ-0.8	Ջրհորդանի տախտակամածի քանդում	մ^3	1.30	26.220	34.086
7	8-300	Տանիքի փայտե էլեմենտների կառուցում, օգտագործելով նոր կողահատ փայտանյութ	մ^3	2.45	260.915	639.242
8	8-131	Ջրհորդանի փոխում 0.55մմ գ/թիթեղով	մ	164.40	7.591	1247.906
9		Կողահատ փայտանյութ ջրհորդանի կառուցման համար	մ^3	1.30	211.043	274.356
10	8-17-Բ	Կավարամածի քանդում և կառուցում, օգտագործելով նոր փայտանյութ	մ^2	280.00	0.857	240.006
11		Կողահատ փայտանյութ կավարամածի կառուցման համար	մ^3	2.60	211.043	548.713
12	10-71	<<Սլուխովի>> շերտափեղկով պատուհանների կառուցում	հատ	1.00	62.992	62.992
13		ծխնիներ	հատ	2.00	0.483	0.967
14		շերտափեղկի փականի սարք	հատ	1.00	1.381	1.381
15	7-25	<<Սլուխովի>> պատուհանափեղկի կառուցում /ճաղաշարով/	հատ	3.00	4.797	14.390
16		Կողահատ փայտանյութ պատուհանափեղկի և ճաղաշարի կառուցման համար	մ^3	0.06	211.043	12.663
17		մեխ	կգ	2.50	0.551	1.378
18		ծխնիներ	հատ	6.00	0.483	2.901
19		շերտափեղկի փականի սարք	հատ	3.00	1.381	4.144
20	8-300	<<Սլուխովի>> պատուհանների վերանորոգում	մ^3	0.15	258.339	38.751
21	14-360	<<Սլուխովի>> պատուհանների յուղաներկում	մ^2	2.80	2.072	5.802
22	9-24 4-1	Տանիքածածկույթի կառուցում ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով ԿՊ-21-0,55մմ	մ^2	843.50	4.272	3603.570
23	8-17-Բ	Օդափոխութքան հորանների և <<Սլուխովի>> պատուհանների պարագծով տախտակամածի կառուցում	մ^2	53.30	0.857	45.687
24		Կողահատ փայտանյութ օդափոխութքան հորանների և <<Սլուխովի>> պատուհանների տախտակամածի կառուցման համար	մ^3	1.60	211.043	337.669
25	8-17-Բ	Պիպերի տակ տախտակամածի կառուցում	մ^2	20.00	0.857	17.143
26		Կողահատ փայտանյութ պիպերի տախտակամածի կառուցման համար	մ^3	0.60	211.043	126.626
27	8-279	Օդափոխության հորանների և <<Սլուխովի>> պատուհանների պարագծով 0,55մմ հաստ. գ/թիթեղի տեղադրում	մ^2	101.00	1.001	101.131

28		Ց/թիթեղ օդափոխության հորանների և <<Սլուխովի>> պատուհանների համար 0,55մմ հաստ.	մ^2	101.00	2.763	279.037
29	8-279	<<Սլուխովի>> պատուհանների կողային մասերի երեսապատում 0,55մմ հաստ. g/թիթեղով	մ^2	10.20	1.001	10.213
30		Ց/թիթեղ <<Սլուխովի>> պատուհանների համար 0,55մմ հաստ.	մ^2	10.20	2.763	28.180
31	8-279	Պիպերի կառուցման 0,55մմ հաստ. g/թիթեղով	մ^2	27.70	1.001	27.736
32		Ց/թիթեղ պիպերի կառուցման համար 0,55մմ հաստ.	մ^2	27.70	2.763	76.528
33	20-524	Գլխանոցների տեղադրում օդափոխության հորանների վրա g/թիթեղից 0.55մմ	մ^2	29.00	4.566	132.400
34		Գլխնոցների ամրացման համար շերտավոր պողպատ 25*3մմ	մ	68.00	0.293	19.914
35		Պտուտակամեխ	կգ	3.00	1.439	4.318
36	8-282	Տանիքի մետաղական պաշտպանիչ ճաղաշարի կառուցում	1գծմ	15.00	0.127	1.902
37		Հեղույս M8X30	կգ	1.80	1.336	2.404
38		Մետաղական ծող Φ14	տն	0.054	548.712	29.630
39		Շերտապողպատ 30x7	մ	23.400	1.492	34.910
40	14-398	Մետաղական պաշտպանիչ ճաղաշարի յուղաներկում	մ^2	32.50	1.180	38.345
41	8-215-Բ	Ջրհոս փոխում g/թիթեղից Φ100	մ	161.00	1.726	277.890
42	8-227-Բ	Ջագարների փոխում g/թիթեղից Φ100	հատ	13.00	3.256	42.330
43	8-219-Բ	Ծունկերի փոխում g/թիթեղից Φ100	հատ	13.00	1.846	24.004
44	23-77	Գոյություն ունեցող շին աղբի մաքրում և բարձում ավտոինքնաթափին ձեռքով	տն	4.20	1.712	7.189
45	23-226	Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով	տն	9.30	0.423	3.930
46	Գ130-11	Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 11կմ	տն	13.50	2.343	31.630
47	10-201	Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով	մ^3	28.00	6.878	192.590
48	10-203	Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով	1մ^2 մշակ մակ.	925.50	0.225	208.483
49	46-189 46-205	Անցքերի շաղափում պարապետներում Φ20	հատ	36.00	1.262	45.440
50	6-79	Խարսխաձողերի տեղադրում Φ12 A-III դասի ամրանով, ծպեղնատոքերի ամրացման համար	տն	0.012	557.256	6.687
51		Հոսուն բետոն խարսխաձողերի ամրացման համար Վ-15	մ^3	0.020	40.481	0.810
52		Մետաղալար Br-5 ծպեղնատոքերի ամրացման համար	տն	0.032	544.874	17.436
53	6-30	Փայտե ճակտոնների կառուցում	մ^2	4.00	1.462	5.846
54		Փայտանյութ ճակտոնի կառուցման համար	մ^3	0.100	211.043	21.104
55	8-279	Ճակտոնների երեսապատում 0,55մմ հաստ. g/թիթեղով	մ^2	9.50	1.001	9.512
56		Ց/թիթեղ ճակտոնների երեսապատման համար 0,55մմ հաստ.	մ^2	9.50	2.763	26.246
		Ընդամենը				9239.613
		Շահույթ 11%				1016.357
		Ընդամենը				10255.970
		Ա.Ա.Հ. 20%				2051.194
		Ամբողջը				12307.164

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ-2

Վանաձոր համայնքի Թումանյան 4 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների կատարման

N/N	Գնի հիմքը	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Արժեքը հազ. դրամ	
					Միավորի	Ամբողջը
1	2	3	4	5	6	7
1	23-159	Ալիքավոր ա/g թերթերից կտուրի քանդում	մ^2	706.00	0.212	150.021
2	23-157	Պիպերի մետաղական թիթեղի քանդում	մ^2	30.70	0.103	3.174
3	23-157	Օդափոխության հորանների և <<Սլուխովի>> պատուհանների պարագծով թիթեղի քանդում	մ^2	87.50	0.103	9.047
4	8-300 գ-0.8	Տանիքի փայտե էլեմենտների ապամոնտաժում	մ^3	1.35	26.220	35.397
5	8-300 գ-0.8	Ջրհորդանի տախտակամածի քանդում	մ^3	1.10	26.220	28.842
6	8-300	Տանիքի փայտե էլեմենտների կառուցում, օգտագործելով նոր կողահատ փայտանյութ	մ^3	1.95	260.915	508.784
7	8-131	Ջրհորդանի փոխում 0.55մմ g/թիթեղով	մ	149.50	7.591	1134.805
8		Կողահատ փայտանյութ ջրհորդանի կառուցման համար	մ^3	1.10	211.043	232.148
9	8-17-Բ	Կավարամածի քանդում և կառուցում, օգտագործելով նոր փայտանյութ	մ^2	211.80	0.857	181.547
10		Կողահատ փայտանյութ կավարամածի կառուցման համար	մ^3	2.10	211.043	443.191
11	7-25	<<Սլուխովի>> պատուհանափեղկի կառուցում /ճաղաշարով/	հատ	4.00	4.797	19.187
12		Կողահատ փայտանյութ պատուհանափեղկի և ճաղաշարի կառուցման համար	մ^3	0.08	211.043	16.883
13		մեխ	կգ	3.30	0.551	1.819
14		ծխնիներ	հատ	8.00	0.483	3.868
15		շերտափեղկի փականի սարք	հատ	4.00	1.381	5.525
16	8-300	<<Սլուխովի>> պատուհանների վերանորոգում	մ^3	0.15	258.339	38.751
17	14-360	<<Սլուխովի>> պատուհանների յուղաներկում	մ^2	2.90	2.072	6.009
18	9-24 4-1	Տանիքածածկույթի կառուցում ցինկապատ պրոֆիլավոր թիթեղով ԿՊ-21-0,55մմ	մ^2	706.00	4.272	3016.147
19	8-17-Բ	Օդափոխուբքան հորանների և <<Սլուխովի>> պատուհանների պարագծով տախտակամածի կառուցում	մ^2	42.50	0.857	36.429
20		Կողահատ փայտանյութ օդափոխուբքան հորանների և <<Սլուխովի>> պատուհանների տախտակամածի կառուցման համար	մ^3	1.70	211.043	358.774
21	8-17-Բ	Պիպերի տակ տախտակամածի կառուցում	մ^2	6.60	0.857	5.657
22		Կողահատ փայտանյութ պիպերի տախտակամածի կառուցման համար	մ^3	0.26	211.043	54.871
23	8-279	Օդափոխության հորանների և <<Սլուխովի>> պատուհանների պարագծով 0,55մմ հաստ. g/թիթեղի տեղադրում	մ^2	87.50	1.001	87.613
24		Ց/թիթեղ օդափոխության հորանների և <<Սլուխովի>> պատուհանների համար 0,55մմ հաստ.	մ^2	87.50	2.763	241.740
25	8-279	<<Սլուխովի>> պատուհանների կողային մասերի երեսապատում 0,55մմ հաստ. g/թիթեղով	մ^2	10.20	1.001	10.213
26		Ց/թիթեղ <<Սլուխովի>> պատուհանների համար 0,55մմ հաստ.	մ^2	10.20	2.763	28.180
27	8-279	Պիպերի կառուցման 0,55մմ հաստ. g/թիթեղով	մ^2	30.70	1.001	30.740
28		Ց/թիթեղ պիպերի կառուցման համար 0,55մմ հաստ.	մ^2	30.70	2.763	84.816

29	20-524	Գլխանոցների տեղադրում օդափոխության հորանների վրա g/թիթեղից 0.55մմ	մ²	21.50	4.566	98.159
30		Գլխնոցների ամրացման համար շերտավոր պողպատ 25*3մմ	մ	40.00	0.293	11.714
31		Պտուտակամեխ	կգ	1.80	1.439	2.591
32	8-282	Տանիքի մետաղական պաշտպանիչ ճաղաշարի կառուցում	1գծմ	15.00	0.127	1.902
33		Հեղույս M8X30	կգ	1.80	1.336	2.404
34		Մետաղական ձող Φ14	տն	0.054	548.712	29.630
35		Շերտապողպատ 30x7	մ	23.40	1.492	34.910
36	14-398	Մետաղական պաշտպանիչ ճաղաշարի յուղաներկում	մ²	30.00	1.180	35.396
37	8-215-Բ	Ջրհոս փոխում g/թիթեղից Φ100	մ	170.00	1.726	293.424
38	8-227-Բ	Ձագարների փոխում g/թիթեղից Φ100	հատ	12.00	3.256	39.074
39	8-219-Բ	Ծունկերի փոխում g/թիթեղից Φ100	հատ	12.00	1.846	22.157
40	23-77	Գոյություն ունեցող շին աղբի մաքրում և բարձում ավտոինքնաթափին ձեռքով	տն	3.20	1.712	5.477
41	23-226	Առաջացած շին աղբի բարձում ավտոինքնաթափին ձեռքով	տն	7.80	0.423	3.296
42	Գ130-8	Շին աղբի տեղափոխում ինքնաթափով 8կմ	տն	11.00	1.904	20.940
43	10-201	Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով	մ³	7.00	6.878	48.148
44	10-203	Կավարամածի մշակում հրակայուն լուծույթով	1մ² մշակ մակ.	810.00	0.225	182.465
45		Անցքերի շաղափում պարապետներում Φ20	հատ	36.00	1.262	45.440
46	6-79	Խարսխաձողերի տեղադրում Φ12 A-III դասի ամրանով, ծպեղնատոքերի ամրացման համար	տն	0.012	557.256	6.687
47		Հոսուն բետոն խարսխաձողերի ամրացման համար Վ-15	մ³	0.020	40.481	0.810
48		Մետաղալար Br-5 ծպեղնատոքերի ամրացման համար	տն	0.032	544.874	17.436
49	6-30	Փայտե ճակտոնների կառուցում	մ²	4.00	1.462	5.846
50		Փայտանյութ ճակտոնի կառուցման համար	մ³	0.100	211.043	21.104
51	8-279	Ճակտոնների երեսապատում 0,55մմ հաստ. g/թիթեղով	մ²	4.80	1.001	4.806
52		Ց/թիթեղ ճակտոնների երեսապատման համար 0,55մմ հաստ.	մ²	4.80	2.763	13.261
			Ընդամենը			7721.258
			Շահույթ 11%			849.338
			Ընդամենը			8570.596
			Ա.Ա.Հ. 20%			1714.119
			Ամբողջը			10284.716

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. հաշվարկ

Ն. Սարգսյան
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՏՐԻՈՇԻՆ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
22112831001
ՍԿՈՐՈՍՅԱՆ ՓՈՂ, Վանաձոր մ/6

Գ. Գրիգորյան
Կ.Տ.

Հավելված թիվ 2
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-3» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Վանաձոր համայնքի Իսահակյան 11 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2017 թվականի սեպտեմբերի 30
2	Վանաձոր համայնքի Թումանյան 4 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	2017 թվականի սեպտեմբերի 30

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ն. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՏՐԻՈՇԻՆ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
Հ/Հ 2050222112831001
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձորի մ/ճ

Գ.Պողոսյան

Հավելված N 3
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

/ՀՀ դրամ/

հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV)	Աշխատանքի անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	45611300	Վանաձոր համայնքի Իսահակյան 11 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	6500000	6500000	6500000	6500000	6500000	6500000	6500000	6500000
4	45611300	Վանաձոր համայնքի Թումանյան 4 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	5500000	5500000	5500000	5500000	5500000	5500000	5500000	5500000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ն. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՏՐԻՈՇԻՆ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
Հ/Հ 2050222112831001
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձորի մ/ճ

Գ. Փոլոսյան

Կ.Տ.

Հավելված թիվ 4
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-3» ծածկագրով պայմանագրի

ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

Չափա-բաժնի համարը	Աշխատանքի անվանումը	Երաշխիքային ժամկետը
3	Վանաձոր համայնքի Իսահակյան 11 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	2 տարի
4	Վանաձոր համայնքի Թումանյան 4 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	2 տարի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Ն. Սարգսյան

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՏՐԻՈՇԻՆ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Շինարարների 2/25
ՀՎՀՀ 06945645
Հ/Հ 2050222112831001
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Վանաձորի մ/6

Գ. Պողոսյան

Հավելված թիվ 5
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-3» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» _____ 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և
կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _____, հիմք ընդունելով Պայմանագրի եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 5.1
«23» հունիսի 2017 թ. կնքված
«ՀՀԼՄ-ԳՀԱՇՁԲ-17/06-3» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Լոռու մարզպետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____ գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն